

*Վերջին փոփոխության ամսաթիվ՝ 02.07.2019  
Խմբագրություն՝ 01*

## **ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ծառայությունների սակագները և դրույքաչափերը**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ կարևորում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ իր հաճախորդների լիարժեք տեղեկացվածությունը: Ստորև ներկայացվող Ամփոփագրում հստակ նշված են **ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ** կողմից առաջարկվող ծառայությունների սակագները, ինչպես նաև պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն, որը Ձեզ կօգնի կողմնորոշվել և կայացնել ճիշտ որոշումներ:

Ցանկացած գործարք կատարելուց կամ բանկային ծառայություն ստանալուց առաջ հանգամանորեն ծանոթացեք Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությանը, իսկ պարզաբանումների անհրաժեշտության դեպքում դիմեք մեր մասնագետներին:

Ամփոփագրի վերջին փոփոխությունը կատարվել է 02.07.2019թ.-ին:

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մասին առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ պաշտոնական կայքէջ [www.araratbank.am](http://www.araratbank.am), կամ գրել մեզ [araratbank@araratbank.am](mailto:araratbank@araratbank.am) էլեկտրոնային հասցեով:

Կարող եք զանգահարել նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հեռախոսային կենտրոն՝ (010) 59 23 23 շուրջօրյա հեռախոսահամարով:

- 1.** Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների և դրույքաչափերի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:
- 2.** Ծառայությունների սակագները և դրույքաչափերը (այսուհետ՝ Սակագներ) կարող են փոփոխվել Բանկի կողմից միակողմանի կարգով՝ այդ մասին նախապես ինտերնետում (բանկի պաշտոնական կայքում) կամ այլ հրապարակային աղբյուրներում, և/կամ Բանկի տարածքում՝ հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:
- 3.** Սակագները սահմանված են ՀՀ դրամով իսկ արտարժույթով գործառնությունների տոկոսով սահմանված սակագները հաշվարկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող տվյալ օրվա արժույթային շուկայում ձևավորվող միջին փոխարժեքով:
- 4.** Սույն սակագներով չսահմանված դեպքերում, գործարքների պայմանները որոշվում են առանձին պայմանագրերով կամ Բանկի այլ ներքին իրավական ակտերով:
- 5.** ԱԱՀ-ով հարկվող գործարքների սակագները ներառում են ավելացված արժեքի հարկը, ինչի վերաբերյալ սակագներում առանձին նշում է կատարված:
- 6.** Միջնորդավճարներն անվիճելի կարգով ելքագրվում են հաշվետերերի հաշիվներից, եթե այլ բան սահմանված չէ Բանկի և հաշվետիրոջ միջև կնքված պայմանագրերով:
- 7.** Առանձին դեպքերում Բանկի վարչության որոշմամբ Բանկի և հաշվետերերի միջև կնքվող պայմանագրերով կարող են սահմանվել այլ սակագներ:
- 8.** Սակագների փոփոխությունները, այդ թվում որոշակի ժամկետում այլ սակագնի կիրառումը, կատարվում են Բանկի վարչության որոշումներով:
- 9.** Բանկը պատասխանատվություն չի կրում՝
  - ա)** հաճախորդի ոչ ճիշտ ցուցումների,
  - բ)** իր տարածքից դուրս կապի միջոցների անսարքությունների,
  - գ)** անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, համաճարակներ, գործադուլներ, շրջափակումներ, ռազմական և արտակարգ դրություն, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, պետական մարմինների ակտեր և այլն) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

## Հաշիվների սպասարկում

Գործառնության տեսակը	Մակագներ
Բանկային հաշիվների բացում և փակում	Անվճար
Վարում՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (տարեկան)	1,000 ՀՀ դրամ*** յուրաքանչյուր հաշվի համար
Վարում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (տարեկան)	5,000 ՀՀ դրամ*** յուրաքանչյուր հաշվի համար
Վարում՝ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (տարեկան)	5,000 ՀՀ դրամ*** բոլոր հաշիվների համար
Վարում՝ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (տարեկան)	10,000 ՀՀ դրամ*** բոլոր հաշիվների համար
Վարում, որոնց բանկային հաշիվների բացումը պայմանավորված է հաճախորդի (ֆիզիկական և իրավաբանական անձ) կողմից ավանդի ներդրման, պլաստիկ քարտի ստացման, արտարժույթային քարտային հաշիվների մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների հաշվեգրման, արգելանքից ազատված գումարների մուտքագրման կամ ոսկու գրավով վարկավորման հետ	Անվճար
Ֆիզիկական անձանց բանկային հաշիվների (այդ թվում ժամկետային ավանդի) բացում և վարում՝ բանկային գրքույկի տրամադրմամբ	300 ՀՀ դրամ*
Ընթացիկ քաղվածքների և վճարային փաստաթղթերի տրամադրում (գործարքի ավարտից հետո)	Անվճար
<b>Հաշվի նվազագույն մնացորդ</b>	
<b>Ֆիզիկական անձանց</b>	
ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	0.00 դրամ
Այլ արտարժույթ	0.00 դրամ
<b>Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի</b>	
ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	0.00 դրամ
Այլ արտարժույթ	0.00 դրամ
<b>Կանխիկ գումարի վճարում հաճախորդի անկանխիկ միջոցներից**</b>	
- ՀՀ դրամ.	0,3%
- ԱՄՆ դոլար	0,4%
- այլ արտարժույթ	Դիվիզային կենտրոնի կողմից տվյալ օրվա համար սահմանած տոկոսադրույքով
<b>Հաշվից (այդ թվում ավանդային հաշվից) քաղվածքների, վճարային փաստաթղթերի կրկնօրինակների, այլ տեղեկությունների տրամադրում (ըստ հաճախորդի պահանջի, յուրաքանչյուր փաստաթղթի համար)</b>	
Մինչև 1 ամիս վաղեմության	500 ՀՀ դրամ*
1 ամսից մինչև 6 ամիս վաղեմության	1,500 ՀՀ դրամ*
6 ամսից մինչև 1 տարի վաղեմության	2,000 ՀՀ դրամ*
1 տարուց մինչև 2 տարի վաղեմության	3,000 ՀՀ դրամ*
2 տարուց ավելի վաղեմության	5,000 ՀՀ դրամ*
<b>Հաշվետերերի (բացառությամբ բանկերի) հաշիվների վերաբերյալ տեղեկանքների տրամադրում, այդ թվում՝ բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների և դրանց գծով մարումների վերաբերյալ (ըստ հաճախորդի պահանջի)</b>	
Առողիտորական կազմակերպություններին	10,000 ՀՀ դրամ*

Այլ անձանց	
1. Հաշվի բացման օրվանից հաշված մինչև 30-րդ օրը ներառյալ	5,000 ՀՀ դրամ*
2. Հաշվի բացման օրվանից հաշված 30-րդ օրվանից հետո	3,000 ՀՀ դրամ*
<b>Դրամարկղային չեկային գրքույկների տրամադրում՝</b>	
1 թերթ	600 ՀՀ դրամ*
25 թերթ	2,000 ՀՀ դրամ*
50 թերթ	3,000 ՀՀ դրամ*
<b>Ըստ հաճախորդի ցանկության թղթադրամների ստուգում, փաթեթավորում և ետ վերադարձ</b>	
- ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.1% նվազագույնը 3,000 ՀՀ դրամ առավելագույնը 20,000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլար	գործարքի գումարի 0.1% նվազագույնը 3,000 ՀՀ դրամ առավելագույնը 20,000 ՀՀ դրամ
- ՌԴ ռուբլի, ԵՎՐՈ	գործարքի գումարի 0.1% նվազագույնը 3,000 ՀՀ դրամ առավելագույնը 20,000 ՀՀ դրամ
<b>Կանխիկ դրամով վճարումների սպասարկում առանց հաշիվ բացելու</b>	
ա) Բանկի համակարգից դուրս	
- մինչև 50,000 ՀՀ դրամ	200 ՀՀ դրամ
- 50,001-ից 100,000 ՀՀ դրամ	300 ՀՀ դրամ
- 100,001-ից 500,000 ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ
- 500,001-ից 1,000,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
- 1,000,001-ից 5,000,000 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ
- 5,000,001 և ավելի	3,000 ՀՀ դրամ
<b>Փոխանցումներ ՀՀ դրամով</b>	
Հաշվից փոխանցումներ	Անվճար
Ստացված փոխանցումների մուտքագրում հաշվին	Անվճար
Ներբանկային փոխանցումներ առանց հաշիվ բացելու	գործարքի գումարի 0.1% նվազագույնը 200 ՀՀ դրամ առավելագույնը 3,000 ՀՀ դրամ
Տեխնիկական գնման կտրոնի տրամադրման վճարների դիմաց (բնապահպանություն, պետ տուրք, տեխ. գնում)	1000 ՀՀ դրամ Գույքահարկի վճարման դեպքում հավելյալ գանձվում է 200 ՀՀ դրամ
<b>Փոխանցումներ արտարժույթով</b>	
Արտարժույթով ՀՀ տարածքում	5,000 ՀՀ դրամ
Բանկի հաշվետերերի միջև (միջմասնաձյուղային)	Անվճար
Ներբանկային փոխանցումներ առանց հաշիվ բացելու	գործարքի գումարի 0.1% նվազագույնը 300 ՀՀ դրամ առավելագույնը 3,000 ՀՀ դրամ
<b>Ընտանեկան դրամագլխի գումարների տնօրինման նպատակով բանկային հաշվի բացում և սպասարկում</b>	
Ընտանեկան դրամագլխի գումարների տնօրինման նպատակով բացված բանկային հաշվում առկա միջոցների նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	9.5%
<b>Տոկոսների վճարումն իրականացվում է այդ նույն հաշվին՝ տարեկան մեկ անգամ</b>	

\*Ներառյալ ԱԱՀ

\*\*Չի կիրառվում ֆիզիկական անձանց (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) բանկային հաշիվներին՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից տրամադրված վարկային միջոցներից, ներդրված ժամկետային ավանդի և

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի գծով հաշվեգրված տոկոսներից մուտքագրված գումարների, սոցիալական փաթեթի և ընտանեկան դրամագլխի, ինչպես նաև արգելանքից ազատված հաշիվներից կանխիկ ելքի նկատմամբ:

\*\*\*Տարեկան վարման վարձը գանձվում է հաշվի բացման պահին: Յուրաքանչյուր հաջորդ տարվա համար հաշվի վարման տարեկան վարձը ենթակա է վճարման տվյալ տարվա տարեկան վարձի գանձումից մեկ տարի հետո նույն օրը, ընդ որում հաշվի վարման վճարը չվճարվելու կամ այդ գումարը հաճախորդի հաշվում բացակայելու դեպքում հաշիվը ենթակա է փակման: Ընդ որում, ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից հետագայում այլ արժույթով կամ նույն արժույթով ևս մեկ հաշվի բացման դեպքում (բացառությամբ ենթահաշիվների) վարման վարձը ենթակա է միանվագ գանձման հաշվի բացման պահին:

**Ուշադրություն.**

- Պահանջվող փաստաթղթերը ՀՀ տարածքից դուրս ուղարկելիս հաշվետիրոջից լրացուցիչ գանձվում են ուղարկման ծախսերը: Փոխանցումներն իրականացվում են մեկ բանկային օրվա ընթացքում: Եթե փոխանցվող միջոցներն արդեն վճարված են շահառուին կամ շահառուի բանկին, ապա բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար:  
Փոխանցված գումարի հետ վերադարձի հետ կապված բանկի ծախսերը կատարվում են Հաճախորդի հաշվին, եթե գումարի հետ վերադարձի գործընթացը բխել է Հաճախորդի կողմից ներկայացրած վավերապայմանների անճշտությունից:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿՈՒՄ ընթացիկ հաշվի պահպանման սակագին, կախված հաշվով գործարքի չկատարելու վաղեմության հետ չի կիրառվում:

**Կանխիկով գործառնություններ**

ԳՈՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ՄԱԿԱԳՆԵՐ
<b>Հաշվին կանխիկ գումարի մուտքագրում՝</b>	
- ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	Անվճար
- այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույթով
<b>Հաշվին կանխիկ մետաղադրամի մուտքագրում</b>	
- մինչև 50 000 ՀՀ դրամ	Անվճար
-50 000 ՀՀ դրամը գերազանցող գումարի	1%
<b>Կանխիկ գումարի վճարում հաճախորդի անկանխիկ միջոցներից**</b>	
- ՀՀ դրամ.	0,3%
- ԱՄՆ դոլար	0,4%
- այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույթով
<b>Հաշվին մուտքագրված կանխիկ միջոցներից կանխիկի վճարում</b>	
- ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	Անվճար
- այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույթով
<b>Հնամաշ և վնասված թղթադրամների փոխանակում ՀՀ դրամով՝</b>	
- ՀՀ դրամ	Անվճար
- ԱՄՆ դոլար	2%
- ՌԴ ռուբլի, ԵՎԸՈ	3%
<b>Կանխիկ դրամով վճարումների սպասարկում առանց հաշիվ բացելու</b>	
<b>Բանկի համակարգից դուրս</b>	
- մինչև 50.000 դրամ	200 ՀՀ դրամ
- 50.001-ից 100.000 դրամ	300 ՀՀ դրամ
- 100.001-ից 500.000 դրամ	500 ՀՀ դրամ
- 500.001-ից 1.000.000 դրամ	1,000 ՀՀ դրամ
-1.000.001-ից 5.000.000 դրամ	1,500 ՀՀ դրամ

- 5.000.001 և ավելի	3,000 ՀՀ դրամ
Ներբանկային փոխանցումներ ՀՀ դրամով առանց հաշիվ բացելու	Գործարքի գումարի 0.1% նվազագույնը 200 ՀՀ դրամ առավելագույնը 3,000 ՀՀ դրամ
Ներբանկային փոխանցումներ արտարժույթով առանց հաշիվ բացելու	Գործարքի գումարի 0.1% նվազագույնը 300 ՀՀ դրամ առավելագույնը 3,000 ՀՀ դրամ

\*Ներառյալ ԱԱՀ

\*\*Չի կիրառվում ֆիզիկական անձանց (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) բանկային հաշիվներին՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից տրամադրված վարկային միջոցներից, ներդրված ժամկետային ավանդի և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի գծով հաշվեգրված տոկոսներից մուտքագրված գումարների, սոցիալական փաթեթի և ընտանեկան դրամագլխի, ինչպես նաև արգելանքից ազատված հաշիվներից կանխիկ ելքի ննկատմամբ

**ԱՌԱՐԿԱՅԱԶՈՒՐԿ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ**

<b>Առարկայագուրկ մետաղական հաշիվների սպասարկում</b>	
<b>Մետաղական հաշվի բացում</b>	
<b>Ֆիզիկական անձ</b>	անվճար
<b>Իրավաբանական անձ</b>	անվճար
<b>Անհատ ձեռնարկատերեր</b>	անվճար
<b>Մետաղական հաշվի վարում</b>	
<b>Ֆիզիկական անձ</b>	Տարեկան 1000 (հազար) ՀՀ դրամ
<b>Իրավաբանական անձ</b>	Տարեկան 1000 (հազար) ՀՀ դրամ
<b>Անհատ ձեռնարկատերեր</b>	Տարեկան 1000 (հազար) ՀՀ դրամ
<b>Բացված մետաղական հաշիվներով թույլատրվող գործառնություններն են՝</b>	
<b>Մետաղական հաշվի համալրում</b>	Բանկից անկանխիկ ոսկի գնելու և այն մետաղական հաշվին մուտքագրելու միջոցով
	Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով
<b>Մետաղական հաշվի ելքագրում</b>	Մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով
	Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով:
<b>Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք</b>	0%
<b>Հաշվի նվազագույն մնացորդ</b>	չի սահմանվում
<b>Հաշվից ներբանկային փոխանցումներ</b>	անվճար
<b>Հաշվից ՀՀ այլ բանկեր և արտերկիր փոխանցումներ</b>	25,000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր մուտքի և ելքի համար)

**Ծանուցում**

- 1.Մետաղական հաշիվները բացվում են ֆիզիկական անձ և կորպորատիվ հաճախորդների՝ այդ թվում անհատ ձեռնարկատերեր հաճախորդների համար:
- 2.Մետաղական հաշիվները բացվում են միայն 999.9 հարզի ոսկով:
- 3.Մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է գրամներով՝ 0.01 գրամ ճշտությամբ:
- 4.Մետաղական հաշիվներով գործառնությունները չեն ենթադրում ոսկու կանխիկ մուտքագրում և ելքագրում:
- 5.Ոսկու անկանխիկ առքուվաճառքը կատարվում է Ձեր գործարքի էական պայմաններ (գինը, կատարման ժամկետը և կշիռը) պարունակող հայտի հիման վրա:
- 6.Բանկի կողմից սահմանվում են 1 գրամ անկանխիկ ոսկու առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք հիմք են ընդունվում հաշվով իրականացվող գործարքներ իրականացնելիս:



**Էսքրոու հաշիվների սպասարկում**

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ՍԱԿԱԳՆԵՐ*	
	Ֆիզիկական անձիք	Իրավաբանական անձիք
Հաշվի բացման և սպասարկման միջնորդավճար	միանվագ 0.05% էսքրոու հաշիվ մուտքագրվող գումարից՝ նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 200 000 ՀՀ դրամ	միանվագ 0.1% էսքրոու հաշիվ մուտքագրվող գումարից՝ նվազագույնը՝ 20 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 700 000 ՀՀ դրամ
Էսքրոու հաշվի բացման և սպասարկման պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ յուրաքանչյուր համաձայնագրի կնքման միջնորդավճար	10 000 ՀՀ դրամ	15 000 ՀՀ դրամ
Հաշվի փակում	անվճար	անվճար
Հաշվից գումարի կանխիկացում	համաձայն տվյալ պահին Բանկում ֆիզիկական անձանց այլ բանկային հաշիվներից կանխիկացման սակագների	համաձայն տվյալ պահին Բանկում իրավաբանական անձանց այլ բանկային հաշիվներից կանխիկացման սակագների
Հաշվից գումարի փոխանցում	համաձայն տվյալ պահին Բանկում ֆիզիկական անձանց այլ բանկային հաշիվներից փոխանցումների սակագների	համաձայն տվյալ պահին Բանկում իրավաբանական անձանց այլ բանկային հաշիվներից փոխանցումների սակագների
Հաշվից քաղվածքների տրամադրում	համաձայն տվյալ պահին Բանկում ֆիզիկական անձանց այլ բանկային հաշիվների քաղվածքների տրամադրման սակագների	համաձայն տվյալ պահին Բանկում իրավաբանական անձանց այլ բանկային հաշիվների քաղվածքների տրամադրման սակագների

\*Ներառյալ ԱԱՀ

**Ծանուցում բանկային (այդ թվում առարկայագուրկ մետաղական) հաշիվների սպասարկման (վարման) և փակման վերաբերյալ**

1. **Բանկային հաշիվները փակվում, իսկ սպասարկման պայմանագիրը լուծվում է՝**
  - Կողմերից յուրաքանչյուրի գրավոր դիմումի հիման վրա:
  - Եթե մեկ տարվա ընթացքում ՀԱՇՎԵՏԻՐՈՋ հաշվով (հաշիվներով) որևէ շարժ (դեբետագրում կամ կրեդիտագրում) չի կատարվում:
  - ԲԱՆԿԻ կողմից սահմանված սակագների համապատասխան վճարում չկատարելու դեպքում:
2. **ՀԱՇՎԵՏԻՐՈՋ նախաձեռնությամբ հաշիվների փակման, սպասարկման պայմանագիրը լուծելու դեպքում՝**
  - Հաշվում (հաշիվներում) առկա դրամական միջոցները կանխիկ կամ անկանխիկ տրամադրվում են հաշվետիրոջը:
3. **ԲԱՆԿԻ նախաձեռնությամբ հաշիվների փակման, սպասարկման պայմանագիրը լուծելու դեպքում՝**
  - Հաշվում (հաշիվներում) առկա դրամական միջոցները փոխանցվում են ԲԱՆԿՈՒՄ բացված հատուկ հաշվին:
4. **Հետագայում ՀԱՇՎԵՏԻՐՈՋ ցանկությամբ (գրավոր դիմումի հիման վրա) տրամադրվում են ՀԱՇՎԵՏԻՐՈՋԸ՝ ԲԱՆԿՈՒՄ նոր հաշվի (հաշիվների) բացման և դրամական միջոցները նոր բացված**

հաշիվներին մուտքագրման կամ ՀԱՇՎԵՏԻՐՈՋ այլ բանկում գտնվող հաշվին (հաշիվներին) փոխանցման միջոցներով:

**5. Բանկային հաշվի մնացորդները սառեցվում և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու ՀԱՇՎԵՏԻՐՈՋ իրավունքները սահմանափակվում են՝**

- ԲԱՆԿԻ և ՀԱՇՎԵՏԻՐՈՋ միջև կնքված պայմանագրի հիման վրա, պայմանագրով նախատեսված չափով:
- ՀԱՇՎԵՏԻՐՈՋ կողմից ԲԱՆԿԻ նկատմամբ պարտավորություն ունենալու դեպքում, պարտավորության գումարի չափով:
- Դատարանի դատական ակտերի հարկադիր կատարումը (ԴԱՀԿ) ապահովող մարմնի որոշմամբ:
- Հարկային մարմինների որոշմամբ:
- “Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին” ՀՀ օրենքով սահմանված դեպքերում:

**6. Բանկային հաշվի մնացորդներն առանց ՀԱՇՎԵՏԻՐՈՋ կարգադրության ենթակա են բռնագանձման (գանձման)՝**

**6.1** ՀԱՇՎԵՏԻՐՈՋ կողմից ԲԱՆԿԻ նկատմամբ պարտավորություն ունենալու դեպքում, պարտավորության գումարի չափով:

**6.2** Դատարանի դատական ակտերի հարկադիր կատարումը (ԴԱՀԿ) ապահովող մարմնի որոշման հիման վրա:

**6.3** Բանկային հաշվի մնացորդների սառեցման և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու ՀԱՇՎԵՏԻՐՈՋ իրավունքները սահմանափակման (արգելադրման) կամ բռնագանձման մասին որոշումը կատարելուց հետո, տեղեկացվում է ՀԱՇՎԵՏԻՐՈՋԸ՝

- առձեռն բանկում (գանձումը կամ արգելադրումը հիմնավորող փաստաթղթերի տրամադրման) միջոցով
- գրավոր (գանձումը կամ արգելադրումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները ՀԱՇՎԵՏԻՐՈՋ փոստային հասցեով ուղարկման) միջոցով
- հեռախոսակապի միջոցով.
- էլեկտրոնային կապի (գանձումը կամ արգելադրումը հիմնավորող փաստաթղթերի լուսահանված պատճենները ՀԱՇՎԵՏԻՐՈՋ - էլեկտրոնային փոստային հասցեով ուղարկման) միջոցով:

ՀԱՇՎԵՏԵՐՆ ընդունում է, որ իր հասցեի, կապի միջոցի կամ էլեկտրոնային հասցեի փոփոխման (չգործելու) մասին ԲԱՆԿԻՆ չտեղեկացնելու դեպքում, սույն կետում նշված տվյալներով ուղարկված տեղեկատվությունը համարվում է պատշաճ ուղարկված: